

ՄԻՆԻՄՈՒՄ-ԲԱՌԱՐԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՒՄ

Լեզուների ուսումնասիրությունն ու դրանց պրակտիկ տիրապետումը պնդվում է կենսական անհրաժեշտություն են դառնում: Այդ անհրաժեշտությունները զգացվում է ոչ միայն քաղաքական, դիվանագիտական ու տնտեսական ոլորտներում, այլև առավելապես գիտության ու տեխնիկայի, գրականության ու արվեստի, ինչպես նաև հասարակական ու ուսումնական բնագավառներում: Հասարակական հարաբերություններում արագ տեղաշարժերը, ժամանակակից գիտության ու տեխնիկայի բուռն թափն առանձնապես հրատապ են դարձնում ուսաց, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լայն ճանաչում գտած լեզուների տիրապետման հարցը: Այդ լեզուներից յուրաքանչյուրի տիրապետումը արտակարգ կարևոր է, քանի որ մայրենի լեզվից բացի այլ լեզու չիմանալ, նշանակում է անբավարար տեղյակ լինել գիտության, կուլտուրայի և այլ բնագավառների համամարդկային նվաճումներին: Ահա թե ինչու լեզուների տեսական ու գործնական ուսումնասիրության հարցը ներկայումս դառնում է ավելի անհրաժեշտ: Պակաս անհրաժեշտություն չի ներկայացնում նաև այն հարցը, թե ինչ ուղիներով կարելի է հասնել լեզուների ավելի ուսուցմանը: Ժամանակակից զարգացած լեզուներն օժտված են բառապաշարների հսկայական ծավալով: Օրինակ. անգլերեն լեզվի Օքսֆորդյան մեծ բառարանը պարունակում է 400 հազար բառ ու բառակապակցություն, ժամանակակից ուս գրական լեզվի տասնյոթ հատորանոց բառարանը ավելի քան 120 հազար բառ, հայերենը՝ ըստ Մալխասյանի քառահատոր բառարանի՝ 120 հազար բառ: Բառերի նման մեծ պաշարներ ունեն ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլ լեզուները: Այդ լեզուներով ազատ հաղորդակցվելու համար մի՞թե կարիք է զգացվում յուրացնել նրանց ամբողջ բառապաշարը կամ էլ այդ բառապաշարի մեծ մասը: Եթե ոչ, ապա ինչպե՞ս կարելի է հասնել դրան:

Մեր առաջ ծառացած հարցին սպառիչ պատասխան է տալիս լեզուների նկատմամբ կիրառվող վիճակագրական մեթոդը: Վիճակագրական մեթոդի օգնությամբ կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ հաճախականության բառարանների հիման վրա կազմված միջնամուտ-բառարանները հանդիսանում են լեզուների ավելի արագ և արդյունավետ ուսուցման և ուսումնասիրության ամենանպատակահարմար միջոցը: Այդ տեսակետը պրնդելու և համոզիչ դարձնելու նպատակով կարող ենք կանգ առնել որոշ փաստական հետազոտությունների վրա:

Որպեսզի ամերիկյան ներգաղթ բանվորներն ավելի արագ սովորեն անգլերեն լեզուն, էլզրիջը վերլուծության է ենթարկում շորս լրագրի հոդվածներ, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 44 հազար բառ: Վիճակագրական հետազոտության ենթարկված այդ ամբողջ ընտրանքում գործածվել են ընդա-

մենը 6000 տարբեր բառեր, որոնք բոլորն էլ մտնում են կազմած բառարանի՝ մեջ: Այդ նույն աշխատության մեջ նշվում է, որ խելացիորեն կազմած բառերի ցանկը, որի մեջ մտնում են տվյալ լեզվի առավել գործածական բառերը, վստահորեն կարող է ծառայել մարդկանց որևէ լեզվով ազատ հաղորդակցվելու համար:

Դա լեզվի ուսուցման և նպատակով կազմած առաջին վիճակագրական ուսումնասիրությունն էր, որին հետագայում հաջորդեցին շատ այլ հետազոտություններ:

Լեզվաբանական վիճակագրությունը պարզել է, որ Թորնդայգի և Լոջի հաճախականության հիշյալ բառարանի ամենահաճախ գործածված բառերի առաջին 2000 բառը արտացոլում է որոշակի երկայնություն ունեցող համապատասխան տեքստի ընդհանուր ծավալի 80 տոկոսը, Տեշիտելովայի և մյուսների կողմից կազմված չեխերեն լեզվի հաճախականության բառարանի² ամենահաճախ գործածված 2000 բառը՝ 75 տոկոսը, Շտեյնֆելդտի ժամանակակից ռուս գրական լեզվի հաճախականության բառարանի 1200 առավել հաճախ գործածված բառերը՝ 70 տոկոսը: Մոտավորապես նույն օրինաչափությունն է նկատվում գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլ լեզուներում, որոնց նկատմամբ նույնպես կատարվել են վիճակագրական ուսումնասիրություններ: Նշված բոլոր հետազոտությունները հնարավորություն են տվել համապատասխան լեզուների մեծածավալ բառապաշարներից առանձնացնել համեմատաբար այնպիսի մի փոքր մաս, որը տվյալ լեզվով հաղորդակցվելու պրոցեսում կատարում է արտակարգ ակտիվ դեր: Իրոք, եթե ռուսաց լեզվի ավելի քան 120 հազար բառ պարունակող բառապաշարից միայն 1200 ամենահաճախ գործածվող բառերը մեզ հնարավորություն են տալիս հաղորդակցվել այդ լեզվով կամ՝ չեխերենի, անգլերենի, իսպաներենի և այլ լեզուների ամենահաճախ գործածվող առաջին 1500—2000 բառի յուրացումից հետո կարելի է ազատ խոսել այդ լեզուներով, ապա ինչու առաջին հերթին չտիրապետել նշված լեզուների հենց այդ բառերը:

Նշված տեղեկությունների ցուցադրումը պարզ է դարձնում, որ լեզու տիրապետել ցանկացողների համար ամենից առաջ անհրաժեշտ է յուրացնել այն բառերը, որոնք տվյալ լեզվում ավելի հաճախ են գործածվում, մանավանդ որ հիշյալ բառերը, ինչպես տեսանք օրինակներում, մեծ թիվ չեն կազմում: Կասկածից վեր է, որ բերված փաստարկումները պերճախոս արտահայտությունն են այն բանի, որ լեզվի նկատմամբ վիճակագրական վերլուծությունները տանում են լեզվում գոյություն ունեցող օրինաչափությունների ու օբյեկտիվ չափանիշների բացահայտմանը:

Լեզվի բառակազմն իր մարմնավորումն է գտնում դիտական, դեղարվեստական ու այլ տեքստերում, ինչպես նաև բանավոր խոսքում: Օգտագործման այդ շրջանակներում էլ ի հայտ են գալիս բառապաշարի գործածության օրինաչափությունները: Այդ օրինաչափությունների բացահայտումն էլ հնարավորություն է տալիս ձևակերպելու լեզվի վերաբերյալ վիճակագրական օրենքներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում տվյալ լեզվի հաճախակա-

¹ Eldrige R., Six thousand common English Words, Niagara Falls, 1911.

² Jaroslav Jelinek, Josef V. Becka, Marie Těšitelova, Frenkvense slov, slovnich druhů a tvarů c českém jazyce. Praha, 1961.

նության բառարանների ու ցուցակների մեջ: Վերջիններիս գործածության շրջանակները, որոնց մասին տարբեր առիթներով հիմնականում արդեն խոսել ենք, շատ լայն են: Այստեղ հարկ է խոսել միայն այն փոխհարաբերությունների մասին, որոնք կարելի է գտնել հաճախականության և մինիմում-բառարանների միջև:

Հաճախականության բառարանն ինքնին մինիմում-բառարան չէ: Նա հանդիսանում է մինիմում-բառարանի համար որպես ելակետային հիմք: Մինիմում-բառարանն անհրաժեշտորեն պետք է հենվի հաճախականության բառարանի տվյալների վրա, սակայն չպետք է բավարարվի միայն նրանով: Քանի որ հաճախականության բառարանը ունի որոշ սահմանափակություններ, որոնք դժվարացնում են մինիմում-բառարանի համար բառերի ընտրման պրոբլեմային հարցի լուծման գործը: Այդ սահմանափակությունները հանդես են գալիս հետևյալ նկատառումներով: Նախ՝ հաճախականության բառարանը սովորաբար իր մեջ չի պարունակում բառերի բազմանշանակության մասին տվյալներ: Բսկ բազմանշանակ բառերն իրենց իմաստային բոլոր տարբերակներով չէ, որ պետք է ընդգրկվեն բառերի մինիմումի մեջ: Մինիմում-բառարանի մեջ նպատակահարմար է մտցնել բազմանշանակ բառերը միայն իրենց այն իմաստներով, որոնցով համեմատաբար ավելի հաճախ են հանդես գալիս տվյալ լեզվում: Եվ՝ բազմանշանակ բառի որևէ իմաստի առաջնություն տալու համար (որպեսզի ընդգրկվի մինիմում-բառարանի մեջ) դարձյալ անհրաժեշտ է հենվել հատուկ տիպի վիճակագրական ուսումնասիրությունների վրա, որոնք նվիրված են բառերի իմաստային հարաբերությունների հետազոտությանը: Երկրորդ. հաճախականության բառարանի մեջ ընդգրկված բոլոր բառերը հանդիսանում են իրավահավասար միավորներ: Որպես առանձին միավորներ նրանում տարբերություն չի տրվում արմատական (գլխավոր) և ածանցյալ բառերի միջև: Մինչդեռ մինիմում-բառարան կազմելիս իրերի դրությունն այլ է: Այդ դեպքում նման մոտեցումն իրեն չի արդարացնում, քանի որ՝ երբ լեզու սովորողը յուրացնում է տվյալ լեզվի այս կամ այն արմատական (գլխավոր) բառը (որը մտնում է հաճախականության բառարանի մեջ), ապա մյուս բառերի կոհումը կամ յուրացումը (որոնք ածանցված են միևնույն գլխավոր բառից, սակայն օժտված չեն բարձր հաճախականությամբ) մեծ ջանքեր չեն պահանջում: Այլ կերպ ասած՝ բառն իր բոլոր ածանցումներով (որոնց մեծ մասը մտնում է հաճախականության բառարանի մեջ) չի ընդգրկվում մինիմում-բառարանի մեջ: Սրա մեջ մտցվում են համապատասխան բառի միայն այն ձևերը, որոնք ունեն ավելի բարձր հաճախականություն և այլն: Որպես օրինակ վերընենք հայերեն *յիր բառը*: Ասենք՝ գիր, գրավոր, գրել, գրիչ, գրող, արտագրող, արտագրել, սևագիր, սևագրող, սևագրել, մափրագրել, մափրագրող, մափրագրություն, մափրագիր, սրբագիր, մակագրել, մակագրություն, ստորագրել, ստորագրություն, գրություն, գրական և այլ ձևեր, որոնց մի մասը (կամ մեծ մասը) կարող է մտնել հայոց լեզվի հաճախականության բառարանի մեջ: Բայց հաճախականության բառարանի մեջ մտած այդ մի մասն էլ ամբողջությամբ չենք կարող ներգրավել հայոց լեզվի մինիմում-բառարանի մեջ: Վերջինիս մեջ կրնգրկվեն տվյալ արմատով կազմված միայն այն ձևերը, որոնք ավելի հաճախ են օգտագործվում հայերենում:

Հիմք ունենալով հաճախականության ցուցակը, մինիմում-բառարանն անհրաժեշտորեն պետք է լրացվի նաև այնպիսի կարևոր բառերով, որոնք ցածր հաճախականություն ունենալու հետևանքով չեն մտել հաճախականության բառարանի մեջ: Ասենք՝ տարվա ամիսների, տարվա եղանակների կամ շաբաթվա օրերի մի մասն ունեցել է բարձր հաճախականություն և, հետևապես, մտցվել հաճախականության բառարանի մեջ: Բսկ մյուս մասն ընդհակառակը՝ համեմատաբար նվազ գործածության հետևանքով՝ դուրս է մնացել հաճախականության բառարանից: Սակայն դա չի նշանակում, որ բառերի մինիմում ընտրելիս տարվա ամիսների, եղանակների կամ շաբաթվա օրերի մի մասը նույնպես պետք է դուրս մնա: Այդ նույնը վերաբերում է նաև նման այլ կարգի անհրաժեշտ բառերի ընտրությանը, որոնք չեն մտել հաճախականության բառարանի մեջ:

Մինիմում-բառարանը համեմատաբար ավելի ամբողջական տեսք կրնա գտնի, եթե այն համալրվի նաև բանավոր խոսքի տվյալներով: Վիճակագրական ուսումնասիրությունները³ ցույց են տվել, որ գեղարվեստական գրականության մեջ գոյություն ունեցող տարրերի ու բանավոր խոսքում հանդես եկող տարրերի փոխհարաբերությունների միջև կան էական տարբերություններ: Այստեղ ակնհայտ է բանավոր խոսքի աղբատությունը՝ գրավոր խոսքի համեմատությամբ: Օրինակ. անգլերեն լեզվի 1000 ամենահաճախ գործածված բառերը կարող են արտահայտել գեղարվեստական գրականության որոշակի երկարություն ունեցող տեքստի ընդհանուր ծավալի 80,5 տոկոսը: Միևնույն ժամանակ նույն առավել հաճախ հանդես եկող 1000 բառը կարտահայտի բանավոր խոսքի համապատասխան երկարություն ունեցող տեքստի ծավալի 89,4 տոկոսը: Տեսնում ենք, որ լեզվական որոշ միավորներ գրավոր ու բանավոր խոսքում հանդես են բերում ակտիվության տարբեր աստիճաններ: Հետևապես լեզվի այդ երկու հատվածների վիճակագրական ուսումնասիրությունների արդյունքների զուգորդումը կարևոր նշանակություն ունի նաև մինիմում-բառարան կազմելու համար:

Այդ բոլորի հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ մինիմում-բառարանը չի ծառայի իր իսկական նպատակին, եթե այն անզգուշորեն ծանրաբեռնվի ոչ այնքան անհրաժեշտ ու ոչ այնքան նպատակային բառերով: Այդտեղ տեղին է մատնանշել Գոգենհայմի, Միշեայի և մյուսների կողմից կազմված ֆրանսերեն լեզվի մինիմում-բառարանը, որը բոլոր լրացումներով հանդերձ կազմում է ընդամենը 1368 ամենահաճախ գործածվող ու անհրաժեշտ բառ. որոնց ակտիվ յուրացումը հնարավորություն է տալիս ազատորեն հաղորդակցվել ֆրանսերեն լեզվով: Նպատակի տեսակետից այս բառարանին նմանվում է Ա. Գրեկուլի խակասական դպրոցների համար կազմած ռուսաց լեզվի մինիմում-բառարանը⁴: Սակայն, ըստ էության, սա նրա հակապատկերն է: Նախ, Գրեկուլը բառերի մինիմում ընտրելիս չի հենվել ռուսաց լեզվի ոչ մի հաճախականության բառարանի տվյալների վրա և, երկրորդ, նա, ըստ էության, չի ստեղծել մինիմում-բառարան: Քանի որ ոչ մի մինիմում-բառարան, եթե այն իրոք կոչված է ծառայելու իր բուն նպատակին, իր մեջ չի ընդգրկել 6900 բառ, որոնք պետք է

³ Ю. Марков, Лексическая статистика и отбор словарного минимума. «Русский язык в национальной школе», 1960 г., № 2, стр. 12.

⁴ Грекул А. И., Словарный минимум по русскому языку для V—VIII классов хакасских школ. Абакан, 1962.

ակտիվորեն յուրացվեն 8-ամյա դպրոցի երեխաների կողմից: Պարզ է, որ բառերի այսպիսի մինիմումը դժվար թե կարողանա ծառայել խակաս երեխաներին՝ ազատ կերպով հաղորդակցվելու ուսուցիչի լեզվով:

Բառերի մինիմումը ընտրելու օբյեկտիվ չափանիշների անտեսումը երկար ժամանակ խիստ կերպով բացասաբար է անդրադարձել լեզուների ուսուցման ու դասավանդման որակի վրա:

Այժմ, երբ հանդես են եկել մեծ թվով վիճակագրական ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն են տալիս սահմանելու լեզուներում գոյություն ունեցող տարրերի օբյեկտիվ չափանիշները, որոնց վրա հուսալիորեն կարելի է հենվել՝ տվյալ լեզվում բառերի մինիմումը ընտրելիս, դարձյալ մեծ մասամբ շարունակվում են անտեսվել հիշյալ օրինաչափություններն ու չափանիշները:

Այսպես, Սովետական Միության ազգային հանրապետությունների տարրական դպրոցների համար կազմված ուսուցիչի շորս մինիմում-բառարաններում՝ իրար չհամընկնող բառերն այնքան շատ են, որ ուսուցումը դժվարանում է ծառայել իր իսկական նպատակին: Նշված մինիմում-բառարանների յուրաքանչյուրն իր մեջ պարունակում է մոտավորապես 2.000 բառ: Այդ բոլոր բառարանների մեջ իրար չհամընկնող բառերի թիվը կազմում է 3.287: Սրանցում ընդգրկված բառերի անհամապատասխանությունն ավելի ակնառու է դառնում, երբ այն քննում ենք ըստ խոսքի մասերի: Չորս մինիմում-բառարաններում տեղ գտած 1.359 գոյական անունից իրար համընկնում են միայն 457 բառ, 311 ածական անունից՝ 81, 228 մակբայից՝ 66, 928 բայից՝ 209 և այլն: Կամ թուրքմենական տարրական դպրոցների համար կազմված ուսուցիչի մինիմում-բառարանում՝ շորրորդ դասարանի համար առանձնացված բառացանկի և հայկական դպրոցների ուսուցիչի համար կազմված ծրագրերում՝ ամփոփված շորրորդ դասարանի բառերի մինիմումի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկու բառացանկի մեջ մտնող բառերի ընդհանուր գումարը կազմում է 736 բառ (399 և 337), որից երկուսի համար ընդհանուր է միայն 67 բառ, որը կազմում է բոլոր բառերի 9 տոկոսը: Այդ մինիմումների միջև բառերի ընդհանրությունն այնքան չնչին է ու անմիօրինակ, որ երկու հանրապետության մեջ սովորող երեխաները պարզապես չեն կարող ուսուցիչի լեզվով հաղորդակցվել միմյանց հետ: Այստեղ չպետք է ստեղծվի այնպիսի կարծիք, թե բառերի նշված մինիմումները պետք է մեկը մյուսի պատճենը հանդիսանան: Ոչ, յուրաքանչյուր ազգային հանրապետություն ունի իր առանձնահատուկ կողմերը, և այդ առանձնահատկություններն էլ իրենց արտացոլումը

5 Ц и т о в и ч В. Н. Словарь-минимум по русскому языку для II—IV классов латышских школ, Рига, 1957 г. Б а к е е в а Н. З., Словарный минимум по русскому языку для I—IV классов в татарских школах, М., 1958 г. Х м е л е в с к и й И. И., Опыт составления обязательного минимума русских слов для активного усвоения учащихся I—IV классов казахской школы. В. кн. «Межреспубликанская научная конференция по вопросам улучшения преподавания русского языка в национальных школах», Ташкент, 1958 г. Проспекты программ по русскому языку для национальных школ РСФСР—«Русский язык в национальной школе», 1959 г., № 2.

6 «Словарный минимум по русскому языку для 2—11 классов туркменской школы», Ашхабад, 1962 г.

7 «Программы восьмилетней школы». Русский язык для I—VIII классов армянской школы, Ереван, 1961 г.

պետք է գտնեն բառերի համապատասխան միևնույնների մեջ: Սակայն, եթե հաշվի առնենք բոլոր հարդելի պատճառներն ու առանձին յուրահատկությունները, այնուամենայնիվ նշված միևնույնների տարբերությունները չպետք է հասցվեն վերոհիշյալ սահմաններին:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ հիշյալ լեզուների համար դասագրքեր ու ձեռնարկներ կազմելիս և հատկապես բառերի միևնույն ընտրելիս հեղինակներն ու մեթոդիստները չեն հենվել վիճակագրական ուսումնասիրությունների վրա, և հետևապես, հաշվի չեն առել բառերի ընտրման օբյեկտիվ չափանիշներն ու վերոհիշյալ նպատակների համար բառեր ընտրելիս առաջնորդվել են զուտ անձնական նախասիրություններով:

Միևնույն բառերի առանձնացման օբյեկտիվ չափանիշների անտեսման հետևանքով հայկական դպրոցների համար կազմված երրորդ, չորրորդ և հինգերորդ դասարանների ուսաց լեզվի դասագրքերում⁸ ընդգրկված են այնպիսի բառեր, որոնց մի մասը քիչ զործածական է, իսկ մի մասի ուսուցումն էլ կարելի էր կազմակերպել ավելի բարձր դասարաններում: Ահա այդպիսի բառերից մի քանիսը. арык, врозь, визжать, небосвод, хилый, плясать, мохнатый, поводок, уродиться, палить, ветхий, светлячок, плескаться, посушить, кайма, ссадина, ходики, удручена, поплясать, котлован, поклажа, зардеть, амуниция, калач և այլն, որոնցից և ոչ մեկը տեղ չի գտել Շտեյնֆելդտի հաճախականության բառարանում:

Այս դասագրքերի ու միևնույն-բառարանների հեղինակները բառերն ընտրել են նախկին դասագրքերից, բառարաններից ու մեթոդական ձեռնարկներից, ինչպես նաև նկատի են ունեցել թեմատիկ սկզբունքը: Անհրաժեշտ է նկատել, որ նախկին դասագրքերից ու մեթոդական ձեռնարկներից օգտվելն իրեն չի կարող արդարացնել նախ այն պատճառով, որ նման դեպքերում հեղինակը ելնում է իր անձնական հակումներից և երկրորդ, որ այդպիսի պարագաներում կրկնվում են նույն սխալներն ու թերի կողմերը, որոնք հատուկ են եղել նախորդ դասագրքերին ու ձեռնարկներին: Անդրադառնալով թեմատիկության հարցին, կարող ենք ասել, որ այդ սկզբունքով բուռների առանձնացումն ավելի կոնկրետ է, քան ձեռնարկների վրա հենվելը: Սակայն այդպիսի մոտեցումը նույնպես չի կարող տվյալ պրոբլեմին բավարար լուծում տալ, քանի որ ամեն մի թեմատիկ կտրվածքում ուսումնասիրողն ազատորեն կարող է օգտագործել իր անձնական անհատականությունը և հանգել այնպիսի անցանկալի հետևանքների, ինչպիսիք տեսնում ենք վերոհիշյալ օրինակներում:

Բառերի միևնույն ընտրելու խնդիրները շարունակում են մնալ ուսումնասիրողների ու մեթոդիստների ուշադրության կենտրոնում: Չէ՞ որ որևէ լեզվի տիրապետման հաջողությունն անմիջականորեն կապված է հենց այդ լեզվի որոշակի բառապաշարի յուրացման հետ: Այդպիսի բառապաշարի առանձնացումն իր ամբողջ դժվարությամբ կանգնած է նաև հայոց լեզվի առաջ: Հայոց լեզուն ընդարձակ վիճակագրական հետազոտության չի ենթարկվել և, բնականաբար, չի կազմվել համապատասխան հաճախականության բառարան, որի վրա կարողանային հենվել բառերի միևնույն ընտրելիս: Այդ հանգամանքը

⁸ Д а в т я н Н. Н., С а з о я н Н., Русский язык, III класс (для армянской школы), Ереван, 1962 г. Д и л а н я н Л. А., А р у т ю н я н Е. Г., Русский язык, IV класс (для армянской школы), Ереван, 1966 г. Ф о л о я н П. М., Русская речь, V класс (для армянской школы), Ереван, 1963 г.

բացասաբար է անդրադարձել (և այժմ էլ շարունակում է անդրադառնալ) ինչպես մի շարք այլ պրոբլեմների լուծման, այնպես էլ ուսումնական հարցերի վրա: Մեր հանրապետությունում (և ոչ միայն մեր) գործում են բազմաթիվ բարձրագույն, միջնակարգ և այլ տիպի դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվում է ուսաց կամ այլ լեզուներով: Այդ հաստատություններում դասավանդվում է նաև հայոց լեզու: Սակայն այդ դպրոցների ու հաստատությունների համար բառերի միևիմում ընտրելիս, դասագրքեր ու ձեռնարկներ կազմելիս ի՞նչ սկզբունքներով են առաջնորդվել սրանց հեղինակները: Իրենց ձեռքի տակ շունենալով վերոհիշյալ տիպի վիճակագրական ուսումնասիրություններ, որպես-վի հնարավորություն ունենային օբյեկտիվ կերպով ընտրել համապատասխան լեքսիկական միևիմում և տեղաբաշխելն ըստ ուսումնական տարիների, նրանք հենվել են սոսկ իրենց ինտուիցիայի ու սեփական փորձի վրա: Պարզ է, որ նման պարագաներում անհնար է հաշվի առնել բառերի ընտրման օբյեկտիվ չափանիշները: Այդպիսի մոտեցման արդյունքը եղել է այն, որ ոչ հայկական դպրոցների նույնիսկ ցածր դասարանների դասագրքերում ընգրկվել են բացառապես չպարզեցված բնագիր տեքստեր, որոնք իրենց մեջ պարունակում են բազմաթիվ օտարազգի, բարբառային և ժամանակակից գրական հայերենին խորթ բառեր: Նրանցում ընդգրկված են նաև մեծ թիվ կազմող այնպիսի բառեր, որոնց ուսուցումն ավելի նպատակահարմար կլիներ անցկացնել ուսման հետագա տարիներում:

Ոչ հայկական դպրոցների 2—8-րդ դասարանների հայոց լեզվի ծրագրերում նշված է. «Նախասովետական և սովետական շրջանների հայ գրողների մտնկական լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով երեխաներին պետք է զգալ տալ հայոց լեզվի գեղեցկությունն ու հարստությունը, նրանց մեջ սեր արթնացնել այդ լեզվի նկատմամբ: Յուրաքանչյուր ստեղծագործության յուրացումը պետք է հարստացնի երեխաների լեզվական պաշարը»⁹: Դա արդարացի է ու վատ չի ասված: Բայց մի՞թե հայոց լեզվի գեղեցկությունն ու հարստությունը երեխաները պետք է զգան այնպիսի օտարազգի և բարբառային բառերի միջոցով, ինչպիսիք են՝ աբխալուղ, սազանդաբ, աֆեբիմ, բավաշի, փաբախ, չաթան, աղաշաբի, դաթիբա, աբլա, սաբաբ, չրվան, յուրդ, աբան, բինա, ղախլան, չախմախու, չախմախ, ֆանգա, համետ, զուլում, եղի, դաշաղ, դինչանալ և բազմաթիվ այլ բառեր, որոնք «հարստացրել» են ոչ հայկական դպրոցների երրորդ, չորրորդ և հինգերորդ դասարանների համար կալված հայոց լեզվի դասագրքերը¹⁰:

Առանց տատանվելու կարելի է պնդել, որ հայոց լեզուն գեղեցիկ ու հարուստ է ոչ այդ բառերով: Ընդհակառակը, այդպիսի բառերը միայն ավելորդ խոչընդոտ են հանդիսանում հայերենի արագ տիրապետմանը և անառարկելիորեն խանգարում են հատկապես այլ ազգի սովորողներին ու ուսումնասիրողներին, աղատ կերպով հաղորդակցվելու հայոց լեզվով:

9 «Ութամյա դպրոցի ծրագրեր, հայոց լեզու ոչ հայկական դպրոցների 2—8-րդ դասարանների համար», Երևան, 1963:

10 Միևիմում-բառարանն ու նրա անհրաժեշտությունը, Հայոց լեզու, ընթերցարան ոչ հայկական դպրոցների V դասարանի համար, Երևան, 1963: Օրդոյան Վ. Ե., Հայոց լեզու, ընթերցարան ոչ հայկական դպրոցների IV դասարանի համար, Երևան, 1965: Քոչարյան Դ. Ե., Հոմերոսի սյան Ե. Թ., Հայոց լեզու, դասագիրք ոչ հայկական դպրոցների III դասարանի համար, Երևան, 1964:

Հիշյալ դասագրքերում տեղ են գտել նաև այնպիսի բառեր, որոնք կամ խորթացել են ժամանակակից գրական լեզվին, կամ էլ օգտագործվում են շատ հազվադեպ: Օրինակ. կուլակ, ֆյոխվա, զգիր, սուրհանդակ, մաուզեր, կոռ, բեգյար, սեպուհ, օգոստափառ, աշտանակել, դերվիշ, մաֆսահավաֆ, մզկիթ, ժանդարմ, խուրջին, ծավի, սաղավարտ, արշին, զօր և այլն: Իսկ՝ դյուցազնական, ամպրոպաշունչ, պատսպարել, բարկացայտ, նիրհել, տֆնել, հեծեծել, խուց, ֆղանցֆ, խուժել, վաղորդյան և մեծ թվով այլ բառերի ուսուցումն ավելի արդյունավետ կլինեի, եթե սրանց ուսուցումը նախատեսվեր ավելի բարձր դասարանների համար: Այստեղ ավելորդ չէ նշել, որ մեջբերված բոլոր հայերեն բառերից և ոչ մեկը չի հանդիպում թեկուզ մեր առանձնացրած 2.600 բառ պարունակող հաճախականության բառացանկում:

Քերված փաստերը մեկ անգամ ևս զգացնել են տալիս անհրաժեշտությունն այնպիսի միևնույն-բառարանի, որը հիմնականում կազմված լինի վիճակագրական վերլուծություններից ստացված տվյալների հիման վրա:

Այդպիսի միևնույն կարիքը միայն վերջին ժամանակներս չէ, որ զգացնել է տալիս: Լեքսիկական միևնույնի պահանջ է զգացվել դեռևս XVII դ., երբ հայտնի մտածող Յան Ամոս Կոմենսկին իր «Զգայական աշխարհը նկարների մեջ» ձեռնարկի համար ընտրում է 8.000 լատինական բառ, որոնց տիրապետումը, ըստ հեղինակի կարծիքի, հնարավորություն կտար սովորողներին՝ ծանոթանալ շրջապատող իրականության հետ ու միաժամանակ, տիրապետել լատիններեն լեզուն:

Այստեղ կարևորն այն չէ, որ առանձնացված բառապաշարը մեծածավալ է ու ավելորդ տերմիններով հարուստ, այլ այն, որ դեռ այն ժամանակ գիտակցվել է միևնույն բառապաշարի անհրաժեշտությունը:

Այդպիսի բառապաշարի առանձնացումն այժմ հայոց լեզվի համար առավել կարևոր պրոբլեմ է, որի ռացիոնալ լուծումն արմատապես կարող է բարելավել ոչ միայն հայոց լեզվի դասավանդման որակը, այլև կարևոր ներդրում կլինի լեզվի ավելի արագ տիրապետման, ուսումնասիրության ու այլ նպատակների համար: Միևնույն-բառարանը չպետք է ձգտի ինչ-որ համապարփակության, այլապես այն կգաղարի միևնույն լինելուց: Նա անհրաժեշտաբար իր մեջ պետք է ընդգրկի տվյալ լեզվի բառերի այն նվազագույնը, որոնց ինտենսիվ տիրապետումը կարողանա հնարավորություն տալ ազատորեն հաղորդակցվելու համապատասխան լեզվով: Միևնույն-բառարանը վստահորեն կարող է ծառայել իր բուն նպատակին միայն այն դեպքում, երբ նրանում չեն ընդգրկվի այնպիսի բառեր, որոնք տվյալ լեզվին կամ խորթ են, կամ էլ շատ հազվադեպ են օգտագործվում (ինչպես տեսանք վերևի օրինակներում):

Որպեսզի ավելի պարզ դարձնենք, որ լեքսիկական միևնույնի ավելորդ ձանրաբեռնումը շահեկան չէ, բերենք այսպիսի օրինակ: ՍՍՀՄ ԳԱ գիտական աշխատակից Յու. Մարկովի կողմից կատարված վիճակագրական վերլուծությունները¹¹ (որոնց արդյունքներն ստուգված են Խորնդայկի, Բլեկի և ուրիշների հետազոտությունների տվյալներով), ցույց են տալիս, որ անգլերեն լեզվի առավել հաճախ գործածված առաջին 3000 բառը արտահայտում է

¹¹ Ю. Марков, О роли лексической статистики при отборе словарного минимума. «Русский язык в национальной школе», 1963, № 4. Ю. Марков, Один год-один язык. «Техника молодежи», 1959, № 1.

նույն լեզվի գեղարվեստական գրականության որոշակի երկայնություն ունեցող տեքստի ծավալի մոտավորապես 90 տոկոսը, 5000 ամենահաճախ դործածվող բառը՝ 93,5 տոկոս, ֆրանսերեն լեզվի առաջին 3000 բառը՝ 92,8 տոկոս, 5000-ը՝ 96 տոկոս: Իսպաներենի առավել հաճախ գործածվող առաջին 3000 բառը՝ 89,5 տոկոս, 5000-ը՝ 92 տոկոս, և այլն (այսպիսի օրինաչափությունն իր շնչին տարբերություններով տարածվում է նաև բոլոր լեզուների վրա): Եթե նկատի ունենանք, որ մնացած բառերի (որոնք չեն մտնում առանձնացված միևիմումի մեջ և համապատասխանաբար կազմում են անգլերենում՝ 6,5 տոկոս, ֆրանսերենում՝ 4 տոկոս, իսկ իսպաներենում՝ 7,5 տոկոս) որոշ մասը կարելի է հասկանալ ըստ կոնտեքստի, իսկ մի մասն էլ հանդիսանում են հատուկ անուններ (սրանց իմացումը հատուկ ջանք չի պահանջում), ապա մնացած մասի տիրապետումը (որն ունի շատ նվազ գործածություն) անհրաժեշտություն չի ներկայացնում, քանի որ այն չի հանգեցնում տեքստի բովանդակության հասկացման էական բարձրացմանը:

Տեսնում ենք, որ լեքսիկական միևիմումի ծանրաբեռնումը ոչ օգտակար բառերով չի նպաստում տեքստերի բովանդակության ըմբռնման նշանակալի բարձրացմանը: Հետևապես, բառերի ընտրումը պետք է կազմակերպել այնպես, որ համեմատաբար հազվադեպ հանդես եկող բառերը չթափանցեն միևիմում-բառարան: Դա, միաժամանակ, նշանակում է, որ մերժվում է սուբյեկտիվ մոտեցումն այդ հարցում և առաջ քաշվում միևիմում-բառարանի համար բառերի ընտրման գիտականորեն հիմնավորված տեսակետը:

Որևէ լեզվում բառերի միևիմում ընտրելիս առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ, թե այն ի՞նչ նպատակի համար է կազմվում: Նվազ հետաքրքրություն չպետք է առաջացնի նաև այն, թե տվյալ լեզվի հատկապես ո՞ր բնագավառի գրականությանը վերաբերող տարրերը պետք է ընդգրկի այն: Ուսումնական միևիմում-բառարանների ու նրանց նպատակների մասին հարկ եղած չափով նշեցինք վերևում: Սակայն ներկա պայմաններում սկզբնավորում է ապրում նաև այնպիսի լեքսիկական միևիմումների կազմումը, որոնք անմիջականորեն կապված են լեզվակառուցման-հասարակական այս կամ այն բնագավառների հետ: Այսպես, Մ. Յա. Յվիլինգը կազմել է գերմաներեն լեզվի համար մի միևիմում-բառացանկ¹², Սա իր մեջ պարունակում է 4000 օգտակար բառեր ու արտահայտություններ, որոնք վերաբերում են դիվանագիտական հարաբերություններին, միջազգային իրավունքին, միջազգային տնտեսական հարաբերություններին, բանվորական ու ազգային-աղատագրական շարժումներին և այլն: Բառացանկը կազմելիս հեղինակն օգտագործել է պարբերական մամուլում տպագրված հոդվածներ, համապատասխան բնադալառների գրականություն, բառարաններ և այլն: Բառերն ընտրելիս հեղինակը հիմնականում առաջնորդվել է թեմատիկ սկզբունքով: Թեմատիկական կտրվածքում հաշվի է առել նաև բառերի օգտագործման հաճախականությունը, ինչպես նաև իր անձնական փորձը:

Այս բառարանի կազմման աշխատանքներում Յվիլինգը կանգնել է լուրջ յոթվարությունների առաջ, նա իր ձեռքի տակ չի ունեցել համապատասխան բնագավառների լեզվական տարրերն ընդգրկող հաճախականության բառա-

¹² М. Я. Цвиллинг, 4000 полезных слов и выражений (немецкий язык), М., 1965 г.

րաններ, որոնց վրա կարողանար հենվել (նշված ճյուղերի համար բառերի մինիմում ընտրելիս) և ստիպված տուրք է տվել որոշ ոչ օբյեկտիվ չափանիշների կիրառմանը: Մինչդեռ նման հանգամանքներում հնարավոր չէ անտորեն որոշել տվյալ բնագավառներում գործող բառերի ռեալ փոխհարաբերությունները:

Մի այլ օրինակ. ՍՍՀՄ ԳԱ Օտար լեզուների ամբիոնի կողմից անցվերեն լեզվով գիտական գրականությունից օգտվելու նպատակով կազմվել է մինիմում-բառարան¹³, որի մեջ ներգրավված են մոտ 2000 բառ և սովելի քան 1000 դարձվածք: Այս մինիմումն իր առջև խնդիր է գնում՝ գիտական գրականությունից օգտվելու պրոցեսը դարձնել ավելի ռացիոնալ: Բառարանում հաշվի են առնված նաև այն դժվարությունները, որոնք պայմանավորված են բառերի բազմանշանակությունների հետ: Ընդհանուր գիտական բառերի սույն մինիմումը կազմելիս հեղինակային կոլեկտիվը հիմնականում նկատի է ունեցել նրանում ընդգրկված բառերի գործածության աստիճանը՝ գիտական գրականության մեջ: Բառարանի համար նյութ են ծառայել գիտական բնագիր տեքստեր, այդպիսի բնագիր տեքստերի միջոցով էլ ստուգվել է առանձնացված մինիմումի արդյունավետությունը:

Թե՛ այս և թե՛ նախորդ մինիմում-բառարանը, որոնք իրենց մեջ պարունակում են լեզուների տարբեր բնագավառներին վերաբերվող բառեր, իրենց տեսակների մեջ առաջին փորձերն են և ղերծ չեն սուբյեկտիվ մոտեցումից բխող թերություններից:

Լեզուների տարբեր բնագավառներն ընդգրկող մինիմում-բառարանները կատարելության կհասնեն միայն այն դեպքում, երբ այդ նույն բնագավառներն արտահայտող գրականությունը ենթարկվի վիճակագրական խոր ու բաղմակողմանի վերլուծության, որովհետև վիճակագրական հետազոտությունները հանդիսանում են այն ռեալ միջոցները, որոնք օբյեկտիվորեն կարողանում են ի հայտ բերել բառերի գործածության այնպիսի օրինաչափություններ, որոնք իրականում գործում են լեզուների համապատասխան ճյուղերում: Բնականաբար, այդպիսի ուսումնասիրությունների տվյալների վրա հենված մինիմում-բառարաններն էլ հարաբերականորեն ավելի ճիշտ կարտացոլեն տվյալ լեզվի համապատասխան բնագավառում հանդես եկող բառերի օբյեկտիվ փոխհարաբերությունները:

Վիճակագրական ուսումնասիրությունների և դրանց վրա հենված լեքսիկական մինիմումների կարիքը ներկայումս ավելի ակնառու է դառնում, երբ ժառանգակից գիտությունն ու հասարակական հարաբերությունները պահանջում են ինֆորմացիայի ավելի արագ ու ռացիոնալ փոխանակություն:

¹³ «Словарь-минимум для чтения научной литературы на английском языке», М. 1964 г.